Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №4 (33) 2017 Гуманитарные науки

ՀՏԴ 81'37

ՄՈԴԱԼԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տ.Բ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ , Թ.Ն.ԱՐՇԱԿՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: spunews@mail.ru

Հոդվածում դիտարկվել են լեզվի մոդալականության խոսութային առանձնահատկությունները՝ որպես հասկացական հարացույց, որոնք առնչվում են կոնկրետ տեքստի, խոսույթի հետ և ներկայացվում են կապակցված տեքստաստեղծ գործունեության միջոցով: Մոդալականությունը դիտարկվում է որպես շարահյուսական կարգ, ինչպես նաև մոդալականության կարգը և արտահայտչամիջոցները խոսույթի շրջանակներում:

Մոդալականությունը նախադասության իմաստային ամբողջականության համար անհրաժեշտ կարգ է, որը հեղինակի կողմից առաջարկվում, ենթադրվում կամ ընկալվում է ըստ իրադրության և կարող է լինել՝ իրական, անիրական, ենթադրային, ցանկալի կամ հնարավոր: Մտքերը, հույզերը, ցանկությունները հաղորդվում են տվյալ լեզվական համակարգում առկա միջոցներով՝ միաժամանակ հաղորդելով կրկնակի իմաստ, որն էլ հենց ձևավորում է տեքստի, որպես վերջնարդյունքի, մոդալականությունը:

Բանալի բառեր. *մոդալականություն, մոդալականության կարգ, պատմողական, հարցական և հարկադրական մոդալականություն, օբյեկտիվ և սուբյեկտիվ մոդալականություն*

Ներկայացված է խմբագրություն 10.12.2015թ.

Դեռևս 19-րդ դարի սկզբին գերմանացի գիտնական Վիլհելմ ֆոն Հումբոլդտն իր աշխատությունների մեջ նշել է, որ լեզուն, ինչպես և մարդու ամբողջ գործունեությունը, ուղղորդվում է զգացմունքներով, հույզերով, որոնք մարդը միշտ արտահայտում է լեզվական միջոցներով: Մոդալականությունը լեզվական համընդհանուր միջոց է և պատկանում է բնական լեզվի հիմնական կարգերի թվին [1]:

Լեզվի մոդալականությունը բավականին հանգամանորեն ուսումնասիրված է լեզվաբանության մեջ և դիտարկվում է որպես հասկացական կարգ՝ արտահայտելով իրականության հանդեպ խոսողի վերաբերմունքը: Նույն այդ վերաբերմունքի հիմքում գտնում ենք այս կարգի բովանդակային կողմը [2]: Այն արտահայտվում է քերականական և բառային տարբեր միջոցներով, ինչպես օրինակ՝ խոնարհման ձևերը, մոդալ բայերը, հնչերանգը և նմանատիպ այլ միջոցները: Տվյալ սահմանման մեջ առանձնացվում է մոդալականության էությունը, ինչի հիմքում ընկած է խոսող-իրականություն կապը:

Մոդալականության հարցի շուրջ բնորոշումները տարաբնույթ են՝ կապված մոդալականության դիտանկյան կամ դիտարկումներում լեզվական միավորների ընդգրկվածության աստիճանի հետ: Մոդալականությունը կարող է դիտարկվել

ա. որպես կոնկրետ խոսքիմասային հարացույցի շրջանակներում արտահայտվող քերականական կարգ, օրինակ՝ բայական եղանակի միջոցով, մակբայի եղանակավորող իմաստային առանձնահատկություններով կամ եղանակավորող բառերի համակարգում,

բ. նախադասության մակարդակում՝ հաղորդվող տեղեկույթի ձևակերպման գործառութային առանձնահատկությունների տեսնկյունից. օրինակ՝ հարցական նախադասությունների միջոցով հորդորի արտահայտում,

գ. խոսույթի մակարդակում, երբ մոդալականությունը հանդես է գալիս որպես ողջ հաղորդագրության գործառութային առանձնահատկությունների տեսանկյունից. օրինակ՝ քաղաքական դիսկուրսում փաստարկումները ձևակերպելու նպատակով:

Լեզվաբանական հետազոտությունների կիզակետում շարունակում են մնալ կոնկրետ տեքստին, խոսույթին առնչվող դիտարկումները, որոնք ներկայացվում են կապակցված տեքստաստեղծ գործունեության միջոցով: Դրան զուգահեռ շարունակաբար ճշգրտվում և կատարելագործվում են թեմային առնչվող եզրույթները, հիմնարար հասկացական հարացույցը, որը կազմում է սկզբունքային հարցերի բացատրական հիմքը: Այդ առնչությամբ առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում մոդալականությունը: Մոդալականությունը բազմաթիվ լեզվաբանների կողմից (Շ. Բալի, Վ.Վ.Վինագադով, Վ.Զ.Պանֆիլով, Տ.Վ.Բուլիգինա, Ա.Վ.Բոնդարենկո և այլոք) դիտարկվել է բայական համակարգի և նախադասության իմաստային-հաղորդակցական արժեքի տեսանկյունից, իսկ արդեն խոսույթի քննության տիրույթում մոդալականությունը հանդես է գալիս որպես տեքստի քերականական կաղապարման կարգ, որն առնչվում է խոսույթը և տեքստը համակարգող, մեկտեղող սկզբունքներին:

Շ. Բալին իր աշխատություններում առանձնացնում է եղանակը՝ որպես նախադասության բաղկացուցիչ մաս, որը մտքի ամենապարզ արտահայտման միջոց է, որն իր մեջ պարունակում է ցանկություն, մտադրություն գնահատում և այլն: Այս պարագայում, մենք գործ ունենք նախադասության զուտ տրամաբանական կառուցվածքաբանության հետ [3] :

Ըստ Վ.Վ. Վինոգրադովի, մոդալականությունը նախադասության իմաստային ամբողջականության համար անհրաժեշտ շարահյուսական կարգ է, որը հեղինակի կողմից առաջարկվում, ենթադրվում կամ ընկալվում է ըստ իրադրության և կարող է լինել՝ իրական, անիրական, ենթադրային, ցանկալի կամ հնարավոր: Մտքերը, հույզերը, ցանկությունները հաղորդվում են տվյալ լեզվական համակարգում առկա միջոցներով՝ միաժամանակ նախադասությանը հաղորդելով կրկնակի իմաստ, որն էլ հենց ձևավորում է տեքստի, որպես վերջնարդյունքի, մոդալականությունը:

Կրկնակի մոդալականությունը միևնույն մոդալականության տարաբնույթ արտահայտչաձևերն են միևնույն խոսույթի շրջանակներում. Օրինակ՝ գերմաներեն՝ Du kannst das machen. (Դու կարող ես դա անել:) Es ist möglich. (Դա հնարավոր է):

Միևնույն ժամանակ, մոդալականությունը կարող է լինել բազմաշերտ, այն է՝ բազմակի մոդալական իմաստներ միևնույն արտահայտչաձևում: Ընդ որում, խոսույթը կարող է նախադասությունների միջոցով հստակեցնել շերտերից որևէ մեկը կամ մի քանիսը. նույն կերպ, ինչպես հստակեցումը կարող է իրականացվել միևնույն նախադասության բառակազմի միջոցով: Դիտարկենք հետևյալ օրինակները՝ Du kannst das verwirklichen. Du hast eine Möglichkeit das zu verwirklichen. Du bist im Stande das zu verwirklichen (Հնարավորություն ունես դա իրականացնելու:)Alle können dir helfen. (Բոլորը քեզ կարող են օգնել:) Du hast entsprechende Fähigkeiten (Դու համապատասխան ունակությունների տեր անձնավորություն ես): Պարզ թարգմանության, նախադասության

մտքի ամբողջականության տեսանկյունից նշված նախադասությունների մոդալականությունը ենթակա է փոփոխման հնչերանգի միջոցով, որոնք համապատասխան տրամաբանական շեշտադրման կամ կոնկրետ հարցական շեշտադրման պարագայում կարող են արտահայտել կասկած, երկմտանք և այլն:

«Մոդալականություն» տերմինը կիրառվում է տարբեր գիտաճյուղերում, սակայն այն միաժամանակ շարունակում է պատկանել այն կարգերի խմբին, որոնք դեռևս չեն ստացել իրենց միանշանակ բնորոշումը՝ չնայած արտասահմանյան և հայրենական (Արությունովա Ն. Դ., Ապրեսյան Յու. Դ., Ռասպապովա Ի. Պ., Ալիսովա Տ. Բ., Գրեպլա Մ., և այլոք) գիտնականների բազմաթիվ հետազոտությունների: Դա բացատրվում է տերմինի բարդ իմաստային լիցքով և բազմակի ու բազմաբնույթ կիրառումներով: Ուսումնասիրելով Ի. Պ. Ռասպապովայի, Տ. Բ. Ալիսովայի, Մ. Գրեպլայի աշխատությունները՝ կարելի է առանձնացնել **պատմողական**, **հարցական** և **հարկադրական** մոդալականություն կամ եղանակավորում: Նշված տեսաբանները մոդալական իմաստներ են համարում նաև **հաստատումը** և **հերքումը**:

Որպես լեզվական համապարփակ կարգ՝ մոդալականությունն իր արտահայտությունն է գտնում լեզվական տարբեր մակարդակում: Այսպիսով, որպես օբյեկտիվ մոդալականության միջոցներ դիտարկվում են՝ **եղանակային**, **ժամանակային**, **երանգավորման**, **հնչերանգային** կարգերը, որպես սուբյեկտիվ մոդալականության միջոցներ՝ **մոդալ բառերը**, **սպասարկու բառերը**, **շարադասությունը** և այլն: Լեզվի մոդալականության արտահայտման կոնկրետ ձևերի վերաբերյալ ավելի մանրամասն վերլուծություն է կատարել ռուս մեծանուն լեզվաբան Վ. Վ.Վինոգրադովը իր «Մոդալականությունը և մոդալ բառերը ռուսաց լեզվում» աշխատության մեջ: Գիտնականը մոդալականությունն անվանում է սուբյեկտիվ-օբյեկտիվ կարգ և այն դիտարկում է որպես նախադասության անբաժանելի մաս, դրա կառուցվածքային հատկանիշ. «Մտքի, զգացմունքի, ցանկության ցանկացած ամբողջական արտահայտում, որը արտացոլում է իրականությունը այս կամ այն արտահայտության միջոցով, կերպավորվում է տվյալ լեզվական համակարգում գոյություն ունեցող նախադասության հնչերանգային կառուցվածքում և արտահայտում է այնպիսի մի շարահյուսական նշանակություն, որն էլ իր ամբողջականությամբ ձևավորում է մոդալականության կարգը»:

Ժամանկակից գրականության մեջ [4] մոդալականությունը բնութագրվում է որպես «ֆունկցիոնալ-իմաստաբանական կարգ, որն արտահայտում է իրականության արտահայտման տարբեր տիպի հրաբերակցություն, ինչպես նաև հաղորդողի սուբյեկտիվ որակման տարբեր տեսակներ»: Մոդալականությունը իրենից ներկայացնում է ցանկացած տեքստի իմաստային հիմքը և դրա ոճական կարգը, ձևավորում է որոշակի գործառութային ոճը և սահմանում շարադրանքի բնույթը [5] :

Մոդալականության լեզվարտահայտչամիջոցների հարացույցի քննության մեջ կարևորագույն դիտանկյուններից մեկը մոդալականության հիմնարար, ճանաչողական հենքն է, որն ապահովում է խնդրո առարկա կարգի դիտարկման առարկայական քննությունը՝ խոսող – իրականություն փոխհարաբերությունների համատեքստում: Ելնելով երկու տիպի հարաբերակցությունից, ավանդաբար առանձնացնում ենք **օբյեկտիվ** և **սուբյեկտիվ** մոդալականություն: **Օբյեկտիվ մոդալականությունը** ցանկացած արտահայտույթան պարտադիր տարրն է, նախադասության հատկանիշ, ձևավորում է նախադասության ստորոգելիական միավոր և սահմանում է արտահայտության հարաբերակցությունը իրականության հետ: Հնարավոր հարացույցը ենթադրում է հետևյալ երկանդամ հակադրամիասնությունները՝ **իրական/անիրական**, **հնարավոր/անհնարին**, **հավանական / անհավանական**: Նման դասակարգման թույլ կողմերը մոդալականության անդամների ծայրաստիճան բևեռացված անդամների միջև իմաստային նրբերանգների, հնարավոր աստիճանավորումների բազմազանությունն է, որը դեռ չի ստացել իր սպառիչ

համակարգում: **Սուբյեկտիվ մոդալականությունն** արտահայտում է խոսողի վերաբերմունքը, ընդ որում, ինչպես այլ քերականական կարգերի պարագայում, այս դեպքում նույնպես հասկացական հարացույցը բաղկացած է որոշակի հակադրամիասնություններ կազմող հասկացություններից՝ **վստահություն/անվստահություն, համաձայնություն/անհամաձայնություն** և այլն: Անհրաժեշտ է փաստել, որ նման հակադրամիասնության անդամների միջև առկա տիրույթները նույնպես բավականին բարդ են և կարող են ենթադրել երանգավորումներ և իմաստային աստիճաններ, որոնք դեռևս հստակ սահմանված չեն: Ինչպիսին էլ լինեն նման հակադրամիասնություններ պարունակող հարացույցները, դրանց իմաստային հենքը ծագում է որոշակի սուբյեկտիվ գնահատականից, որն իր մեջ ներառում է «հաղորդողի ոչ միայն տրամաբանական որակավորումը, այլ նաև հուզական հակազդումը» [4]: Խոսողի գնահատականը նախադասության մեջ ձևավորում է մոդալականության 2-րդ շերտը, ինչը թույլ է տալիս այն անվանել նախադասության **երկակի/կրկնակի** մոդալականություն: Օրինակ՝ Natürlich kannst du das. Aber du d a r f s t es nicht tun. (Իհարկե դու դա կարող ես անել: Սակայն դու դրա իրավունքը չունես):

Der Brief kann nicht verloren gehen. — Նամակը չէր կարող կորած լինել

Der Brief darf nicht verloren gehen. — Նամակը ոչ մի դեպքում չպետք է կորչի:Հիվանդությունը պետք է բուժվի (այլապես այն վատ հետևանքներ կունենա) Die Krankheit will kuriert werden (sonst könnte sie schlechte Folgen haben).

Եթե խոսենք կարգի իմաստաբանական ծավալի մասին, ուրեմն սուբյեկտիվ մոդալականության ծավալն ավելի մեծ է, քան օբյեկտիվինը, քանի որ մոդալականության տվյալ տարատեսակները իրենց մեջ ներառում են զգալի իմաստաբանական տիրույթ: Դա հիմք հանդիսացավ, որպեսզի Մ.Վ. Լապոնը փաստի, որ «սուբյեկտիվ մոդալականությունը ընդգրկում է որակավորումը՝ լեզվում տարակերպ և տարաբնույթ միջոցների իրապես գոյություն ունեցող ամբողջ նրբերանգներով» [6]:

Ի.Ռ. Գալպերինի կարծիքով նախադասությունը ցանկացած արտահայտության արձանագրումն է, որն արտահայտում է ոչ միայն օբյեկտիվ իրականությունը, այլ նաև իր մեջ ներառում է դրա մեջ արտացոլված օբյեկտիվ կապերի որոշակի հարաբերությունները: Նրա կարծիքով մոդալականության տեքստաստեղծ-հաղորդակցական գործառույթներում առանձնակի առաջնայնություն ունի խոսողի (գրողի) վերաբերմունքը իրականության հանդեպ, ինչը կանխադրում է մոդալականության հատկանիշի հիմքը ցանկացած տիպի արտահայտության մեջ [7-9] :

Տեքստի, իսկ առավել ուշ ավելի ընդհանրական՝ *խոսույթի մոդալականություն* հասկացությունը, որպես գիտական հետազոտության առարկա, ուսումնասիրվում է 20-րդ դարի 80-ական թվականներից: Այն անմիջականորեն կապված է մոդալականության որպես ընդհանուր լեզվաբանական կարգի հետ, որն ընկած է արտահայտության (խոսքի) հիմքում, ինչպես նշում է Գ.Պ. Նեմեցը [10] «մոդալականությամբ օժտված են լեզվական խոսքային միավորները, ինչով էլ առաջնորդվում է մարդը»: Մյուս կողմից, այն արտացոլում է տեքստի յուրահատկությունը՝ որպես համակարգ և որպես վերջինիս իմաստաբանական հենք:

Վերջին ժամանակներում մոդալականության լեզվաբանական վերլուծության ոլորտում զգալի տեղ է զբաղեցնում հաղորդակցական ուղղվածությունը, որը մոդալականությունն ընկալում է ոչ միայն որպես քերականական կարգ, որը հատուկ է միայն նախադասությանը, այլ նաև՝ որպես **տեքստային /խոսութային կարգ**: «Մոդալականութուն» հասկցության կիրառման ոլորտը փոփոխելու և այն տեքստի կամ խոսույթի տիրույթում դիտարկելու դեպքում, տվյալ կարգի գործաբանական բնույթը, ըստ Ն.Ս.Վալինովի, զգալիորեն ընդլայնվում է [11]: Տվյալ սահմանման բովանդակության փոփոխությունը կապված է «տեքստ» հասկացության ըմբռնման փոփոխության հետ, որը

չի դիտարկվում որպես պարզ և կայուն միավոր, որը հարատև բնույթ ունի, այլ՝ որպես «գործառույթ»: Տեքստի նման ընկալումը ենթադրում է հաղորդակցական համակարգի որոշակի իրացում տեքստի ներսում, որն էլ որոշում է տեքստի նշանակությունը, այն է.

1. *կողմնորոշում դեպի հասցեագրողը*. խոսքում արտահայտված է անհատականութունը, հաղորդողի հուզական վիճակը,
2. *կողմնորոշում դեպի հասցեատերը*. խոսքը կախված է խոսակցի կամ ունկնդրի անհատականությունից
3. *կողմնորոշում դեպի լեզվական համակարգը*. բուն հաղորդում,
4. *կողմնորոշում դեպի հաղորդման ձևաչափը*, որի միջոցով փոխանցվում է հաղորդումը,
5. *կողմնորոշում դեպի իրականությունը*՝ հաղորդման պատճառները,
6. կողմնորոշում դեպի գործողությանը, այսինքն հենց տեքստին, որպես իրադարձությունը համակարգող միջոցին:

Տվյալ կողմնորոշումների իրագործումը առաջին պլան է մղում մոդալականությունը որպես կարգ, որտեղ հնարավորինս վառ արտահայտված են վերաբերմունքը իրականության, տեքստի բովանդակության, ինչպես նաև հասցեատիրոջ նկատմամբ: Եթե մոդալականությանը անդրադառնանք այդ տեսակետից, ապա այդտեղ արտացոլվում են հաղորդակցության փոխազդեցության չորս գործոնները՝ խոսողի, խոսակցի, արտահայտության բովանդակության և իրականության, այսինքն մոդալականությունը *սահմանում է* դիսկուրսը և *սահմանվում* դիսկուրսի մեջ: Ինչպես նշում է Ի.Ռ.Գալպերինը, [12] «Քանի որ խոսողի վերաբերմունքը իրականությանը կարող է արահայտված լինել ամենատարբեր միջոցներով՝ ձևականորեն, քերականական, բառային, դարձվածաբանական, շարահյուսական, հնչերանգային, կոմպոզիցիոն, ոճաբանական, մոդալականությունը լեզվական կարգ է, որը հատուկ է լեզվական գործունեությանը, այսինքն՝ խոսքին, և հենց այդ պատճառով էլ պարփակում է հաղորդակցական գործընթացի բուն էությունը (իմաստը)»:

Այսպիսով, մոդալականության վերաբերյալ դիտարկումները թույլ են տալիս եզրակացնել, որ մոդալականության կարգը անհրաժեշտաբար պետք է դիտարկվի խոսույթի շրջանակներում՝ դուրս գալով պարզագույն համատեքստային քննության սահմանագծից և ներառելով իր մեջ մոդալականության տեքստաստեղծ գործառույթը, որն, իր հերթին, կարող է նպաստել հաղորդակցական կաղապարների առավել ամբողջական, ընդհանրական և խորքային տիպաբանական վերլուծությանը՝ հոգելեզվաբանության, հանրալեզվաբանության, հաղորդակցության տեսության, լեզվամշակութաբանության և այլ միջառարկայական գիտակարգերի տեսանկյունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Языкознание. Большой энциклопедический словарь. М., 1998. [2, էջ. 303].

Л. В. Селезнева «Текстовая модальность в разных типах дискурса» Филология и искуствоведение.

2. Ахманова О. С. Словарь лингвистических терминов. — Изд. 3-е. — М.: КомКнига, 2005. — ст. 237–238.

3. Балли Ш. Общая лингвистика и вопросы французского языка. – М., 1955, ст. 44 .

Р.Т. Гильфанов «Функционально-семантическое поле модальности действительности в немецком языке» 2010 г.

4. Ярцева В. Н. 2-е изд. — М.: Большая Российская энциклопедия, 2002. — ст. 303, 30.

5. Солганик Г. Я. Текстовая модальность как семантическая основа текста и важнейшая стилевая категория // Синтаксическая стилистика. — М.: КомКнига, 2006. — ст.188–201.

6. Ляпон М. В. Модальность //Лингвистический энциклопедический словарь / Гл.ред. Էջ 303
7. Виноградова В.В. О категории модальности и модальных словах в русском языке.– Волгоград, 1980. – ст. 35. Виноградов В. В. Избранные труды: исследования по русской грамматике./ В. В. Виноградов– М.: Наука, 1975. – 559 ст.
8. Бочкова О. С. О категории модальности, времени и пространства в жанре Автореф. канд. дисс.– Саратов., 2006. – Էջ. 14.
9. Шенделъс Е.И. Практическая грамматика немецкого языка. М., 1988. – ст. 67.
10. Немец Г. П. Грамматические средства выражения модальности в русском языке. — Харьков: Око, 1991. — ст. 6.
11. Валгина Н. С. Теория текста. Учебное пособие. — М.: Логос, 2003. — ст. 280.
12. Пешковский А. М. Русский синтаксис в научном освещении. — М.: Эдиториал УРСС, Էջ 2001. — ст.432 .

РЕЗЮМЕ
ДИСКУРСНЫЕ ОСОБЕННОСТИ МОДАЛЬНОСТИ
Т.Б.МИКАЕЛЯН, Т.Н.АРШАКЯН

В статье рассматриваются некоторые особенности категории модальности – как общеязыковой категории выражающей отношение, эмоциональный фон, субъективные и объективные смысловые оттенки придаваемые дискурсу. Модальность представлена в свете разных теорий и подходов для обобщения основного научно-методического инструментария анализа данной категории.

SUMMARY
DISCOURSE PECULIARITIES OF MODALITY
T.B. MIKAYELYAN, T. N. ARSHAKYAN

The article dwells on some features and peculiarities of the category of modality that are considered – as a general language category expressing speaker's attitude, emotional background, subjective and objective semantic nuances conveyed within discourse. Modality is introduced in the light of different theories and approaches for generalizing the main scientific-methodological toolkit of analysis of this category.